

«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅՐ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

Պ Ո Ա Կ

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ ռեկտոր, ք.գ.դ.

_____ Գ.Կ. Խաչատրյան

“ _____ ” _____ 2009թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր Ք

ՍԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում
(արձանագր. թիվ _____ “ _____ ” _____ 2009թ.)

ՎԱՆԱԶՈՐ

2009թ.

1. Ընդհանուր դրույթներ

Մագիստրոսական կրթության առանձնահատկությունները:

1.1. Ըստ ՀՀ «Կրթության մասին» ներկայումս գործող օրենքի (գլուխ 2, հոդված 8)՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է եռաստիճան բարձրագույն կրթության համակարգ.

1. բակալավրիատ,
2. մագիստրատուրա,
3. մասնագետ:

Մագիստրատուրայի հիմնական նպատակը բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումն է բարձրագույն, միջին մասնագիտական, հանրագիտական ուսումնական հաստատություններում, քոլեջներում, կրթական ասպարեզի գիտահետազոտական հաստատություններում, նաև կրթության կառավարման մարմիններում աշխատելու համար:

1.2. Մագիստրոսական կրթական ծրագրերը երկրորդ մակարդակի բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրեր են, որոնք կազմված են երկու մասերից՝ կրթական և գիտահետազոտական: Կրթական մասը ներառում է ընդհանուր մասնագիտական և հատուկ առարկաներ, որոնք նպատակաուղղված են մասնագիտական կրթության խորացմանը, տնտեսագիտական և կառավարչական գիտելիքների ընդլայնմանը, գիտության կոնկրետ ասպարեզի պատմական և փիլիսոփայական խնդիրներին: Մագիստրատուրայի ուսանողի գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը որոշվում է անհատական պլանով:

1.3. Մագիստրոսական ծրագրերը մշակվում են մագիստրոսական կրթության համապատասխան պետական չափորոշիչի հիման վրա: Նոր մագիստրոսական ծրագրերի մշակումը իրականացվում է այն ամբիոնի աշխատանքային խմբի կողմից, որը հանդիսանում է մասնագիտական ամբիոն տվյալ մագիստրոսական մասնագիտացման համար: Մագիստրոսական ծրագրի հիման վրա ամբիոնի աշխատանքային խումբը մշակում է նաև աշխատանքային ուսումնական պլան: Մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանը կազմվում է համապատասխան դեկանատներում՝ ամբիոնի աշխատանքային խմբի մասնակցությամբ և քննարկվում է տվյալ մագիստրոսական ուսուցման բաժինը համակարգող պրոռեկտորի, դեկանի և մագիստրատուրայի ծրագրերի համակարգողի մասնակցությամբ: Համապատասխան շտկումներ կատարելուց հետո պրոռեկտորը հաստատում է ուսումնական պլանը և ներկայացնում է այն գիտխորհրդի քննարկմանը: Քննարկման համար անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքային ուսումնական պլանը, բոլոր հատուկ առարկաների ծրագրերը, ինչպես նաև ընտրովի առարկաների ցանկը: Գիտխորհուրդը լսում է ուսումնական պլանը մշակող անձանց ելույթները, ինչպես նաև տվյալ պլանի գրախոսությունն իրականացրած մասնագետին, որը կարող է նշանակվել տվյալ բուհից, կամ հրավիրվել այլ բուհերից: Գրախոս է նշանակվում ուսումնական թրոսական նյութեր և ծրագրեր մշակելու և գրախոսելու փորձ ունեցող մասնագետը:

1.4. Մագիստրատուրան ՎՊՄԻ-ի ուսումնական ստորաբաժանումն է, որը կազմակերպում է մագիստրոսական ուսուցման գործընթացը՝ բոլոր մագիստրոսական ծրագրերով:

1.5. Մագիստրատուրայի ղեկավարությունը իրականացվում է ՎՊՄԻ-ի ուսումնական գծով պրոռեկտորների կողմից:

1.6. Պրոռեկտորները հանդիսանում են մագիստրոսական ծրագրերի ղեկավարներ:

1.7. Պրոռեկտորները ղեկավարում են մագիստրատուրայի գործունեության հետ կապված հարցերի քննարկումները դեկանների, մագիստրոսական մասնագիտացման ամբիոնների վարիչների, մագիստրատուրայի գիտական ղեկավարների, մագիստրոսական ծրագրերի համակարգողի մասնակցությամբ:

1.8. Յուրաքանչյուր մագիստրոսական ծրագիր ունի իր մասնագիտական ամբիոնը և գիտական ղեկավար՝ ՎՊՄԻ-ի առաջատար մասնագետներից:

1.9. Մասնագիտական ամբիոնը և համապատասխան դեկանատը պատասխանատու են մագիստրոսական կրթական ծրագրի որակի և բովանդակության, ուսումնական պլանի մշակման և այդ պլանով նախատեսված առարկաների աշխատանքային ծրագրերի մշակման համար:

1.10. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը՝

- համակարգում է ՎՊՄԻ-ի տարբեր ամբիոնների աշխատանքները՝ ուսուցման բարձր որակի ապահովման նպատակով,
- մասնակցում է մագիստրատուրայի դասախոսների ընտրությանը,
- նախապատրաստում է առաջարկներ՝ մագիստրոսական ատենախոսությունների գիտական ղեկավարների նշանակման և ուսանողներին մագիստրոսական ատենախոսության պաշտպանությունը թույլատրելու վերաբերյալ,
- կատարում է խորհրդատվություն մագիստրատուրայի ուսանողների համար՝ նրանց ուսուցման անձնական պլանների հարցերի շուրջ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՎՊՄԻ-ի մագիստրատուրայում ուսումնական գործընթացը կազմակերպվում է ըստ ՎՊՄԻ-ի գիտխորհրդի կողմից ընդունված «Մագիստրատուրայի ժամանակավոր կանոնակարգ»-ի, համաձայն որի՝

2.1. Մագիստրատուրայում ուսումնական գործընթացը իրականացվում է պետական չափորոշիչներով մշակված ուսումնական պլաններով և ծրագրերով: Ուսումնական ծրագրերը հաստատվում են ՎՊՄԻ-ի գիտխորհրդի կողմից, առարկայական ծրագրերը՝ համապատասխան ամբիոնների և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորների կողմից:

2.2. Մագիստրանտի գիտական և ուսումնական աշխատանքն իրականացվում է համաձայն պրոռեկտորի կողմից հաստատված անհատական պլանի:

2.3. Ուսուցման հիմնական ձևերից են դասախոսությունները, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքները, կուրսային աշխատանքների կատարումը, գիտական աշխատանքների կատարումը ամբիոններում, գիտահետազոտական և մանկավարժական պրակտիկաները համապատասխան ուսումնական հաստատություններում և գիտական հիմնարկություններում, ինքնուրույն աշխատանքը և այլն:

2.4. Մագիստրոսական ծրագրով ուսուցումը ենթադրում է մագիստրանտի ակտիվ ինքնուրույն աշխատանք: Այս նկատառումով նրա միջին լսարանային բեռնվածությունը չպետք է գերազանցի շաբաթական 18 ժամը:

2.5. Անհատական ուսումնական պլանի կատարման վերահսկողության նպատակով նախատեսվում է ընթացիկ ատեստավորում ուսումնական պլանի բոլոր առարկաների համար՝ միջանկյալ ստուգումների, ստուգարքների ու քննությունների տեսքով: Մագիստրանտի գիտելիքների գնահատման կարգը շարադրված է առանձին փաստաթղթում:

3. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ՌԻՍԻՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

3.1. Համաձայն ՀՀ Կրթության և գիտության նախարարության 2007թ դեկտեմբերի 6-ի N1193-Ն հրամանի՝ մագիստրոսական կրթության տևողությունը սահմանվել է 2 տարի (առկա ուսուցման համակարգում): Ուսումնական տարին բաղկացած է 2 կիսամյակից:

3.2. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 15-ից:

3.3. Ուսումնական տարվա տևողությունը կազմում է.

առաջին կիսամյակ՝ 17 շաբաթ,

երկրորդ կիսամյակ՝ 17 շաբաթ,

երրորդ կիսամյակ՝ 13 շաբաթ՝ տեսական դասընթաց, 4 շաբաթ՝ մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկա,

չորրորդ կիսամյակ՝ 8 շաբաթ՝ տեսական դասընթաց, 2 շաբաթ՝ գիտահետազոտական պրակտիկա, 8 շաբաթ՝ աշխատանք մագիստրոսական ատենախոսության թեմայով և դրա պաշտպանությունը:

Մագիստրատուրայի առաջին տարում քննաշրջաններին հատկացված է 3-ական շաբաթ յուրաքանչյուր կիսամյակում, երկրորդ տարում՝ 4շաբաթ (3 շաբաթ՝ երրորդ կիսամյակում, մեկ շաբաթ՝ չորրորդ կիսամյակում):

Արձակուրդներ. առաջին և երկրորդ տարվա ձմեռային արձակուրդների համար տրամադրվում է երկուսական շաբաթ, առաջին տարվա ամառային արձակուրդներին տրամադրվում է 10 շաբաթ:

4. Մագիստրոսական ուսումնական պլանի կառուցվածքը

4.1. ՎՊՄԻ-ի մագիստրոսական ուսումնական պլանի աշխատատարությունը համապատասխանում է 120 ակադեմիական կրեդիտների:

4.2. Մագիստրատուրայի ուսումնական պլաններում կրեդիտների և դասաժամերի բաշխումը կատարվում է հետևյալ հարաբերակցությամբ.

- շաբաթական 2 ժամ դասախոսությանը տրամադրվում է 4 ժամ ինքնուրույն աշխատանք և կիսամյակում հատկացվում է 3 կրեդիտային միավոր,
- շաբաթական 2 ժամ գործնականին (սեմինարին) տրամադրվում է 2 ժամ ինքնուրույն աշխատանք և կիսամյակում 2 կրեդիտային միավոր,
- շաբաթական 2 ժամ լաբորատոր աշխատանքին տրամադրվում է 2 ժամ ինքնուրույն աշխատանք և կիսամյակում 2 կրեդիտային միավոր,
- Քննաշրջանում քննությանը պատրաստվելու համար առարկայի շաբաթական յուրաքանչյուր ժամ դասախոսության դիմաց հատկացվում է 0,5 կրեդիտային միավոր:
- Այն մասնագիտական առարկաներին, որոնց դասավանդումը հիմնականում իրականացվում է գործնական կամ լաբորատոր պարապմունքների ձևով և նախատեսվում է քննություն, քննաշրջանում քննությանը պատրաստվելու համար շաբաթական յուրաքանչյուր ժամի դիմաց հատկացվում է 0,25 կրեդիտային միավոր:
- Տեսական մասից ստուգարքով ավարտվող առարկայի ստուգարքին պատրաստվելու համար առարկայի շաբաթական յուրաքանչյուր ժամ դասախոսության դիմաց տրվում է 0,25 կրեդիտային միավոր:

4.3. ՎՊՄԻ-ի մագիստրատուրայի ուսումնական պլանները բաղկացած են հետևյալ հիմնական հատվածներից.

- Ընդհանուր մասնագիտական առարկաներ
- Ծրագրի պարտադիր դասընթացներ
- Ընդհանուր մանկավարժահոգեբանական և մասնագիտացման առարկաներ
- Գիտահետազոտական աշխատանք
- Մանկավարժական պրակտիկա
- Գիտահետազոտական պրակտիկա:

Յուրաքանչյուր առարկայական հատվածում ընգրկված են պարտադիր և ընտրովի առարկաներ:

5. Մագիստրատուրայի ուսանողների անհատական ուսումնական պլան

5.1. Ըստ ՎՊՄԻ-ի գիտխորհրդի կողմից ընդունված «Մագիստրատուրայի ժամանակավոր կանոնակարգ»-ի, մագիստրանտի գիտական և ուսումնական աշխատանքն իրականացվում է համաձայն պրոռեկտորի կողմից հաստատված անհատական պլանի, որը ներառում է մագիստրոսական ուսումնական պլանում ներկայացված բոլոր պարտադիր առարկաներ, ընտրովի առարկաներ, գիտահետազոտական և մանկավարժական պրակտիկաներ, գիտահետազոտական աշխատանքի կատարում, մագիստրոսական ատենախոսության պատրաստում, պետական ատեստավորման անցում:

5.2. Անհատական ուսումնական պլանի ձևը բերված է հավելված 1-ում և ներառում է նաև մագիստրանտի հաշվետվությունը՝ կատարած աշխատանքի վերաբերյալ:

5.3. Մագիստրոսի անհատական ուսումնական պլանի ձևավորման համար անհրաժեշտ պահանջները ներկայացված են ուսումնական պլաններում, ուսումնական առարկաների ծրագրերում, գիտա-մանկավարժական պրակտիկայի և գիտահետազոտական աշխատանքի ծրագրերում:

5.4. Մագիստրանտի անհատական ուսումնական պլանի ձևավորման համար անհրաժեշտ տեղեկատվությունը (աշխատանքի ծավալը ժամերով, յուրաքանչյուր տեսակի աշխատանքի համար նախատեսած ժամաքանակը, ընտրովի առարկաների ցանկը) տրամադրվում են մագիստրոսական ծրագրերի ղեկավարի (պրոռեկտորի) կողմից՝ տվյալ կիսամյակին նախորդող կիսամյակի ավարտից երկու շաբաթ առաջ, իսկ առաջին կիսամյակի համար՝ առաջին կիսամյակի առաջին երկու շաբաթների ընթացքում:

5.5. Ուսանող-մագիստրանտը պարտավոր է կազմել, համաձայնեցնել և հանձնել իր անհատական աշխատանքային պլանը մագիստրատուրայի բաժին՝ յուրաքանչյուր կիսամյակի սկզբից երկու շաբաթների ընթացքում: Հաստատված անհատական պլանի բնօրինակը պահվում է մագիստրատուրայի բաժնում, իսկ պատճենը տրամադրվում է ուսանողին:

5.6. Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից երկու շաբաթ առաջ ուսանողը պարտավոր է կազմել, համաձայնեցնել և հանձնել մագիստրատուրայի բաժին հաշվետվություն՝ իր կատարած աշխատանքների մասին: Պրոռեկտորի կողմից հաստատելուց հետո, բնօրինակը պահվում է մագիստրատուրայի բաժնում, պատճենը տրամադրվում է ուսանողին:

5.7. Անհատական ուսումնական պլանի կատարման մասին Հաշվետվության կազմման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ուսանողը վերցնում է իր անհատական ուսումնական պլանից:

5.8. «Գիտահետազոտական աշխատանք» բաժնի տվյալ կիսամյակի համար նախատեսած աշխատանքի կատարումը, ինչպես նաև փաստացի կատարած աշխատանքի ծավալը (ժամ),

նշվում են «ստուգված/չստուգված» գրառումով, կամ գնահատականով և գիտական ղեկավարի ստորագրությամբ:

5.9. «Գիտահետազոտական պրակտիկա» բաժնի համար նախատեսած աշխատանքի կատարումը, ինչպես նաև փաստացի կատարած աշխատանքի ծավալը (ժամ), նշվում են «ստուգված/չստուգված» գրառումով, կամ գնահատականով և գիտական ղեկավարի ստորագրությամբ: Պրակտիկայի կատարումը հաստատվում է ղեկավարի կողմից միայն ուսանողի՝ պրակտիկայի մասին գրավոր հաշվետվություն ներկայացնելուց հետո:

5.11. «Ընտրովի առարկաներ» բաժնի կատարումը հաստատվում է մագիստրոսական ծրագրի գիտական ղեկավարի ստորագրությամբ: Ուսանողը ինքնուրույն լրացնում է այդ մասի սյունակները, ներառյալ ստացած գնահատականները:

5.12. Անհատական ուսումնական պլանը համարվում է կատարված՝ ուսանողի կողմից իրականացված աշխատանքները մագիստրոսական ծրագրի ղեկավարի (պրոռեկտորի) կողմից հաստատելուց հետո:

6. Մագիստրատուրայի ուսանողների գիտելիքների գնահատումը

6.1. Գնահատման տեսակները

6.1.1. Ընթացիկ ստուգումներ

Ընթացիկ ստուգումները նախատեսված են կոնկրետ առարկաների առանձին հատվածների յուրացումը ստուգելու համար: Ընթացիկ ստուգումների անցկացման ձևը՝ գրավոր աշխատանք (թեստերի, առաջադրանքների, հարցերի ձևով): Ընթացիկ ստուգումների բովանդակությունը պետք է համապատասխանի տվյալ առարկայի դասավանդման ծրագրին և կարող է ներառել նաև ուսանողի ինքնուրույն աշխատանքի համար նշված հարցերից:

6.1.2. Ամփոփիչ ստուգում

Ամփոփիչ ստուգումները իրականացվում են ստուգարքների ու քննությունների տեսքով: Ստուգարքները անցկացվում են կիսամյակների վերջում, իսկ քննությունները՝ քննաշրջանի ընթացքում՝ համաձայն ՎՊՄԻ-ում գործող ընթացակարգի: Ամփոփիչ ստուգումների բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին՝ համաչափորեն ընդգրկելով նրա բոլոր բաժինները:

6.1.3. Թեստային հարցերը պետք է ունենան պատասխանների մի քանի տարբերակներ, որոնցից ուսանողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը:

6.1.4. Ռեֆերատ

Ռեֆերատը արտալսարանային գրավոր աշխատանք է՝ 10-20 մեքենագիր, կամ 25-30 ձեռագիր էջերի ծավալով: Այս աշխատանքի նպատակը ուսանողի մոտ տվյալ առարկայի դասընթացից ստացած տեղեկատվության կրճատ շարադրման կարողության, դասընթացի կոնկրետ թեմայի հիմնական դրույթների կրճատ շարադրման հմտության ձևավորումն է:

Ռեֆերատի թեմաները ընտրվում են այնպես, որպեսզի ուսանողը օգտվի ոչ միայն տվյալ առարկայի դասախոսություններից, այլ նաև ուսումնասիրի լրացուցիչ գրականություն

7.2. Քննությունների և ստուգարքների վերահանձնումը:

7.2.1. Ստուգարքների և քննությունների վերահանձնումը ևս իրականացվում է ըստ ՎՊՄԻ-ում ընդունված կանոնակարգի:

8. Գիտահետազոտական աշխատանք մագիստրատուրայում

8.1. ՎՊՄԻ-ի մագիստրատուրայի գիտահետազոտական աշխատանքը կազմում է մագիստրոսի պատրաստման ծանրաբեռնվածության 40%-ը, ինչը համապատասխանում է 49 կրեդիտային միավորի:

8.2. Մագիստրոսական գիտահետազոտական աշխատանքը (ԳՀԱ) պետք է համապատասխանի մագիստրոսական ուսուցման պետական կրթական չափորոշիչներով սահմանված պահանջներին, ինչպես նաև ՎՊՄԻ-ի մագիստրատուրայի ժամանակավոր կանոնակարգի պահանջներին:

8.3. ԳՀԱ-ի կազմակերպման համար կազմվում է անհատական և խմբակային պարապմունքների դասացուցակ: Այդ պարապմունքները գիտահետազոտական աշխատանքի ընթացիկ ստուգումների ձև են և պարտադիր են հաճախելու համար:

8.4. Մագիստրանտների ԳՀԱ-ի ղեկավարները և մագիստրոսական ծրագրերի ղեկավարները կարող են նշանակել նաև լրացուցիչ անհատական խորհրդատվություններ, որոնց հաճախումները ուսանողների համար կանավոր են:

8.5. ԳՀԱ-ի ձևերը նշվում են գիտահետազոտական աշխատանքի ծրագրում՝ ուսումնական պլանում նախատեսած ծավալով: Գիտահետազոտական աշխատանքի ծրագիրը հաստատվում է ռեկտորի կողմից՝ ուսումնական աշխատանքի գծով պրոռեկտորների ներկայացմամբ: ԳՀԱ-ի ծրագրում մանրամասնորեն շարադրվում է տվյալ աշխատանքի բովանդակությունը:

8.6. Ուսանողներին կարող են առաջարկվել ընտրության համար ԳՀԱ-ի մի քանի թեմաներ: Ընտրած թեման մագիստրատուրայի ուսանողները ամրագրում են իրենց անհատական պլանում:

8.7. Մագիստրոսի ԳՀԱ-ն պետք է համապատասխանի հաստատված նորմատիվներին (հավելված 1):

Հավելված 1: Մագիստրոսական գիտահետազոտական աշխատանքի հաշվառման չափորոշիչները:

Գիտահետազոտական աշխատանքի տեսակները			
ԳՀԱ-ի տեսակները	Ուսումնական պլանով հատկացված կրեդիտներ	Ուսանողի ծանրաբեռնվ. (ժամ) ըստ ուսումն. պլանի	Դասախոսի ծանրաբեռնված. (ժամ), աշխատանքի վարձատրման հիմքը
Կուրսային աշխատանք	3		
Ռեֆերատ, զեկուցում	6		
Տպագրություններ, զեկուցումներ կոնֆերանսներին			
Գիտահետազոտ. աշխ. մագիստր. ատենախոս. թեմայով	18		
Մագիստրոսի թեզի ձևակերպում և պաշտպանություն	12		
Գիտահետազոտական պրակտիկա			
2 շաբաթ՝ 4-րդ կիսամյակում	3		

9. Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական ապահովումը.

9.1. Մագիստրոսական ուսուցման յուրաքանչյուր դասընթացի համար նախատեսվում է ուսումնա-մեթոդական ապահովում.

9.1.1. ուսումնական գծով պրոռեկտորի կողմից հաստատված առարկայական ծրագիր,

9.1.2. տվյալ դասընթացների համար նախատեսված գիտելիքների ստուգման և գնահատման ձևերը, դրանց նկատմամբ ներկայացվող պահանջները,

9.1.3. կուրսային աշխատանքների թեմատիկ ուղղվածությունը,

9.1.4. գրավոր միջանկյալ ստուգման օրինակելի ձև,

9.1.5. տվյալ առարկայից ԳՀԱ-ի նկարագիր:

9.1.1. Առարկայական նկարագիր

Ուսումնական պլանով նախատեսված առարկաների ծրագրերը ձևակերպվում են ըստ հետևյալ պահանջների.

Տիտղոսաթերթ

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

« _____ » ԱՌԱՐԿԱՅԻ

ԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ _____

(ծածկագիր)

Վանաձոր

«Հաստատում եմ»
Ուսումնական աշխատանքների
գծով պրոռեկտոր, ք.գ.թ.
_____ Թումանյան Ս.
“___” _____ 2009թ

Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ
Աշխատանքային ուսումնական ծրագիր

_____ առարկայի դասընթացից
_____ մասնագիտության համար
Ամբիոն _____
Կուրս _____
Կիսամյակ _____
Դասախոսություններ _____ (ժամ)
Գործնականներ _____ (ժամ)
Լաբորատոր աշխատանքներ _____ (ժամ)
Ինքնուրույն աշխատանք _____ (ժամ)
Գիտելիքների ստուգման ձևը _____ կիսամյակ _____

Աշխատանքային ուսումնական ծրագիրը կազմված է _____ չափորոշիչների
հիման վրա:
(մասնագիտության համարը)

Աշխատանքային ուսումնական ծրագիրն ընդունված է ամբիոնի նիստում
“___” _____ 200__թ Արձանագրություն № _____
ստորագրություն _____ Ա Ա Յ

Աշխատանքային ուսումնական ծրագիրը հաստատված է ֆակուլտետի մեթոդական
խորհրդում

“___” _____ 200__թ
Արձանագրություն № _____
ստորագր. _____ ԱԱՅ

Աշխատանքային ուսումնական ծրագիրը համաձայնեցված է ուսումնական վարչության հետ՝

“ _____ ” _____ 200_____թ. _____ ստորագր. _____ Ա Ա Յ

Հավելված 2

1. Թեմատիկ պլան

№	Թեմաների անվանումը	Ժամերի քանակը				Ինքն. աշխ. ստ. ձևերը	Ժամերի ընդհ. քանակ
		դասախոս.	սեմինար, գործնական	լաբոր. աշխ.	Ուս.ինքն. աշխ.		
1							
2							
ընդամ.							

2. Ուսումնական պարապմունքների անցկացման և ստուգման ձևերը

№	Թեմաներ	Ուս. պարապմ. անցկացման ձևերը	Ուս. պարապմ. ընթացքում օգտագ. ստուգ. ձևերը	Ինքն. աշխ. կազմակերպ. ձևերը	Ինքն.աշխ. ստուգման ձևերը
1					
2					

3. Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական ապահովում՝

- 3.1. Ռեֆերատների և կուրսային աշխատանքների թեմաների ցուցակ,
- 3.2. Ստուգողական աշխատանքներ.
 - թեստեր,
 - ստուգողական աշխատանքների թեմաներ,
- 3.3. Քննության(ստուգարքի) հարցաշարեր,
- 3.4. Լաբորատոր աշխատանքների մեթոդական ապահովում:

Յուրաքանչյուր լաբորատոր աշխատանքի համար կազմվում է մեթոդական ձեռնարկ:

Եթե դասախոսն ունի մշակած ձեռնարկ, ապա այն կարող է օգտագործվել որպես հավելված՝ տվյալ ծրագրի համար:

3.5. Եթե տվյալ առարկայի համար նախատեսված է գիտահետազոտական աշխատանք, ապա անհրաժեշտ է նշել աշխատանքների այն տեսակները, որոնք պետք է կատարեն ուսանողները: Օրինակ՝ նախապատրաստում գիտական սեմինարին, գիտական հոդվածի պլանավորում, կատարում և ձևակերպում, որոշակի թեմայով վերլուծության կատարում և ձևակերպում, ռեֆերատի ձևակերպում:

3.5. Գրականության ցուցակ՝

- Հիմնական գրականություն
- Լրացուցիչ գրականություն:

Հավելված 3

Դասընթացի (առարկայի) աշխատանքային ծրագիրը

1. Դասընթացի թվանիշը և անվանումը

2. Դասընթացը վարողները

ա) դասախոսություն _____	Հեռ. _____	e-mail: _____
Ա Ա Յ, գիտական կոչում		
բ) գործնական (սեմինար) _____	Հեռ. _____	e-mail: _____
Ա Ա Յ, գիտական կոչում		
գ) լաբորատոր _____	Հեռ. _____	e-mail: _____
Ա Ա Յ, գիտական կոչում		

3. Դասախոսի հետ ուսանողների անհատական (ինքնուրույն) աշխատանքի օրերը, ժամերը և լսարանները:

4. Գրականություն:

ա) Պարտադիր. *թվարկվում են դասագրքեր, մենագրություններ, մեթոդական ձեռնարկներ, գիտական և հանրամատչելի հոդվածներ՝ հեղինակների, հրատարակության վայրի և տարեթվի պարտադիր նշմամբ: Ցուցակի մեջ պարտադիր պետք է տեղ գտնեն տվյալ առարկային վերաբերող վերջին հրատարակումները, ինչպես նաև էլեկտրոնային նյութեր՝ կայքերի նշմամբ:*

բ) Լրացուցիչ. *թվարկվում են այն աշխատությունները, որոնք, ըստ դասախոսի, կարող են օգնել ուսանողին հասկանալու տվյալ առարկայի կարևոր նշանակությունն ունեցող դժվար ընկալելի թեմաները, պարզաբանելու որոշ անհրաժեշտ խնդիրները և հիմնահարցերը:*

5. Դասընթացի նկարագիրը: *Ներկայացվում է դասընթացի անցկացման տարին և կիսամյակը, իրագործման ձևերը (դասախոսություններ, գործնական (սեմինար) և լաբորատոր պարապմունքներ): Համառոտ տրվում է դասընթացն անցնելու անհրաժեշտությունը տվյալ մասնագիտության համար, ուսումնասիրվող այլ առարկաների*

հետ նրա կապը, ուսումնական, գիտական կամ ճանաչողական, դաստիարակչական առումով նպատակահարմարությունը:

6. Դասընթացի կառուցվածքը: Ներկայացվում է դասընթացին հատկացված ընդհանուր աշխատաժամանակը՝ ըստ բաղադրիչների (դասախոսություններ___ժամ, սեմինար(գործնականներ)___ժամ, լաբորատոր պարապմունքներ ___ժամ, ինքնուրույն աշխատանք___ժամ, ստուգողական աշխատանքներ___ժամ, գործնական հանձնարարություններ___ժամ, ընթացիկ ստուգումներ___ժամ և այլն): Նշվում է դասընթացի ավարտման ձևը (ամփոփիչ ատեստավորում, ստուգարք, քննություն):

7. Դասընթացի նպատակը: Կրճատ նշվում է տվյալ դասընթացի նպատակը՝ ելնելով առարկայի գիտական էությունից և նրա կարևորությունից՝ տվյալ մասնագիտացում ստացող ուսանողին անհրաժեշտ գիտելիքների համալիրի մեջ: Առանձնացվում է այն նյութը, որի խորը յուրացումը թույլ կտա ուսանողներին ինքնուրույն պատկերացնել տվյալ առարկայի էությունը, արժեքը և նշանակությունը, ինչպես նաև կապը մնացած առարկաների հետ, գոյություն ունեցող հիմնահարցերը և դրանց լուծման հնարավոր ուղղությունները: Պարզաբանվում է տվյալ առարկայի գործնական նշանակությունը:

8. Գնահատման համակարգը: Ուսանողի առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է ողջ կիսամյակի (տարվա) ընթացքում կատարած աշխատանքների յուրաքանչյուր բաղադրիչի գնահատման հանրագումարի արդյունքում: Գնահատման ժամանակ դասընթացի բաղադրիչներ են հանդիսանում դասերին ներկայությունը, ինքնուրույն աշխատանքը (տնային հանձնարարություններ), գործնական (սեմինար) աշխատանքները, լաբորատոր աշխատանքները, ընթացիկ ստուգումները, վերջնական ստուգումը և այլն:

Դասընթացի յուրաքանչյուր բաղադրիչի համար ամբիոնը սահմանում է չափաբաժիններ (սովորաբար՝ արտահայտված տոկոսներով), որոնց առավելագույնը ուսանողը կարող է հավաքել ծրագրային սահմաններում տվյալ չափաբաժին ներկայացված պահանջները լրիվ կատարելու դեպքում:

Օրինակ՝	1.	Ներկայություն դասերին՝	10 %
	2.	Ինքնուրույն աշխատանք՝	20 %
	3.	Գործնական(սեմինար) և լաբորատոր աշխատանք՝	20 %
	4.	Առաջին ընթացիկ ստուգում՝	20 %
	5.	Երկրորդ ընթացիկ ստուգում՝	20 %
	6.	Ամփոփիչ ստուգում՝	10 %
			----- 100 %

Ներկայացվում է վերջնական գնահատման համակարգը.

Գերազանց-----%, Լավ-----%, Բավարար-----%,

Թերի-----% (կարելի է չհանձնած բաղադրիչը լրացնել), Անբավարար-----%
Նկարագրվում է յուրաքանչյուր բաղադրիչի գնահատման պայմանները:

9. Ներկայացվում է ինքնուրույն (անհատական) աշխատանքների թեմաները և հանձնման ժամկետները:

1.

2. և այլն

10. **Ընթացիկ ստուգումներ:** Շարադրվում են ընթացիկ ստուգումների թեմաները, ժամկետները, գնահատման համակարգը և անցկացման ձևերը (գրավոր կամ բանավոր, ստուգման թեստային, հարցաշարով կամ դրանց համադրությամբ ձև, գործնական առաջադրանքների ընդգրկում և այլն): (Ընթացիկ հարցումներն անցկացվում են դասերից հետո: Ստուգարքների համար՝ 5-րդ, 11-րդ և 16-րդ շաբաթներում, քննությունների համար՝ 8-րդ և 17-րդ շաբաթներում):

11. **Պասընթացի ընդհանուր բովանդակությունը (օրացուցային պլանը):** Ներկայացվում են դասախոսությունների և գործնական (սեմինար) աշխատանքների թեմաները՝ ըստ շաբաթների.

1 շաբաթ-----

2 շաբաթ ----- և այլն:

Օրինակ.

Շաբաթ 1. 15-21 սեպտեմբերի 200 թ:

Դասախոսության թեման. **Քաղաքական գաղափարախոսության էությունը:**

Քաղաքական գիտակցության հասկացությունը: Քաղաքական գիտակցությունը որպես հասարակական կյանքի քաղաքական ոլորտի ոչ ինստիտուցիոնալ բաղադրամաս: Քաղաքական գիտակցության մակարդակները: Քաղաքական գիտակցության հոգեբանական մակարդակը: Քաղաքական հոգեբանության և գաղափարախոսության փոխադարձ կապը: Քաղաքական գիտակցության գաղափարախոսական մակարդակը:

Գրականություն. Պարտադիր, Լրացուցիչ (նշել գրականության ցանկից անհրաժեշտ համարները):

Շաբաթ 4. 8-13 հոկտեմբերի 200 թ:

Սեմինար պարապմունքի առաջադրանք՝ Ներկայացնել քաղաքական գաղափարախոսությունների ձևավորման հիմնական մոդելները՝ իրենց օրինակներով:

Գրականություն. Պարտադիր, Լրացուցիչ (նշել գրականության ցանկից անհրաժեշտ համարները՝ ներառյալ օտար լեզուներով հրատարակված գրականությունը և Ինտերնետ-կայքերը:

10. Հակիրճ տեղեկություններ՝ մագիստրոսական ուսուցման առարկայական ծրագրերի մասին:

Առարկայական ծրագրերի հակիրճ նկարագրությունը տեղակայվում է ինստիտուտի կայքում՝ տեղեկատվական թերթիկի տեսքով.

Առարկայի անվանումը	
Դասախոս	ԱԱՀ, գիտ. աստիճան
Առաջարկվող գրականություն	Հիմնական դասագրքերը, ներառյալ Ինտերնետ-աղբյուրները
Առարկայի նկարագրությունը	Հակիրճ նկարագրություն՝ առարկայի դասավանդման նպատակը և ուսանողների ստացած գիտելիքները տվյալ առարկայի դասավանդման արդյունքում

Օրացուցային թեմատիկ պլան

N	Թեմա	Ժամերի քանակը
		Ընդամենը, ժամ

11. Տեղեկություններ՝ մագիստրատուրայի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասին:

Մագիստրատուրայի դասախոսներին վերաբերող տեղեկատվությունը պետք է ներկայացվի ուսանողներին և ատեստավորող մարմիններին: Յուրաքանչյուր դասախոս լրացնում է ներկայացված ձևերը:

Աղյուսակ 1.

Ընդհանուր տեղեկություններ մագիստրատուրայի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասին

Դասախոսի ԱԱՀ	Կրթությունը	Գիտական աստիճանը	Գիտական կոչումը	Դոկտոր. ատենախ. պաշտպ. տարին	Թեկնած. ատենախ. պաշտպան. տարին	Գիտամանկավարժական գործ. ստաժը	Դաս. առարկան

Աղյուսակ 2.

Տեղեկություններ դասախոսների գիտամանկավարժական գործունեության մասին

Ցուցանիշներ	Հրատարակչություն	Հր.տարին	Ծավալը (տպ. թերթ)	Համահեղինակներ
1. Ուսումնամեթոդական աշխատանք				
1. Մեթոդական ձեռնարկներ 2. Ուսումնական ձեռնարկներ 3. Դասագրքեր				
2. Գիտահետազոտական աշխատանք				
1. Հոդվածներ՝ գիտական ամսագրերում ա) հայրենական բ) արտասահմանյան				
2. Մեկնադրություններ				
3. Ելույթներ՝ միջազգային կոնֆերանսներում				
4. Մասնակցությունը ԳՀԱ-ում(բյուջետային, տնտեսալիցենզիային, գրանտներ)				
5. Պատենտներ				

10. Մագիստրատուրայի դասախոսների վարձատրությունը

10.1. Մագիստրատուրայի դասախոսների վարձատրությունը կատարվում է ըստ պայմանագրի: Պայմանագիրը կնքվում է կոնկրետ ժամանակահատվածի համար, որի ընթացքում դասախոսը վարում է պարապմունքներ մագիստրատուրայում: Պայմանագրում դասախոսը նշում է կատարված աշխատանքների տեսակները և գնահատում է իր ծանրաբեռնվածությունը ժամերով՝ ելնելով հետևյալ նորմատիվներից.

- լսարանային ժամերի անցկացումը,
- ուսումնական պլանով նախատեսած գիտելիքների ստուգման ձևերը (քննություն՝.... ժամ, ստուգարք՝... ժամ),
- ԳՀԱ-ի ղեկավարություն,
- Կուրսային աշխատանքների ղեկավարություն (6 ժամ՝ 1 ուսանողի համար)
- մագիստրոսական ատենախոսությունների ղեկավարություն (40 ժամ՝ 1 ուսանողի համար):

Հատուկ մագիստրատուրայի համար նոր դասընթացների մշակման դեպքում պայմանագրի մեջ կարելի է հաշվի առնել նաև դասընթացի,ինչպես նաև դրա անցկացման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերի մշակման վրա շախսած ժամանակաը:

11. Դասավանդման որակը

Մագիստրոսական ծրագրի որակի անընդհատ գնահատումը իրականացվում է հետևյալ մեթոդներով.

1. Պետական ատեստավորման շրջանակներում, որը կատարվում է տարին մեկ անգամ:
2. Յուրաքանչյուր կիսամյակի վերջում կատարվող ուսանողական հարցումների միջոցով:
3. Դասավանդվող առարկայի որակի վերաբերյալ դասախոսական հարցումների միջոցով:

Դասախոսների հարցումների մոտավոր բովանդակությունը:

Խնդրվում է դասախոսներին լրացնել ներկայացված ձևը՝ դասընթացի ավարտից հետո:

Մագիստրոսական ծրագրի անվանումը
Դասընթացի անվանումը
Դասընթացի աշխատատարությունը ժամեր _____ կրեդիտներ _____
Ուսանողների քանակը խմբում
Դասընթացի գրաֆիկի խախտումները Խախտումների թիվը Պատճառները.

1. տոնական օրեր 2. դասախոսի հիվանդություն 3. ուսանողների բացակայության պատճառով 4. այլ պատճառներ (նշել պատճառը)
Ուսանողների գիտելիքների ստուգման արդյունքները (միջինը խմբում, դասախոսի կարծիքով) գերազանց _____ լավ _____ բավարար _____ անբավարար _____
Չառաջադիմող ուսանողների թիվը (բացասական գնահատական ստացած և գնահատական չստացած) Պատճառները. ա) քննությանը (ստուգարքին) չներկայանալը _____ բ) ուսանողների նախորդ պատրաստվածության ցածր մակարդակը _____ գ) նախորդ առարկաներից պատրաստվածության բացթողումները (նշել առարկաները) _____ դ) դասընթացը դժվարամատչելի է ուսանողների համար _____ ե) ուսանողների վատ աշխատանքը կիսամյակի ընթացքում զ) այլ պատճառներ (նշել պատճառները)
Որո՞նք են դասընթացի հիմնական ձեռքբերումները
Որո՞նք են դասընթացի հիմնական բացթողումները
Ի՞նչ փոփոխություններ եք դուք պլանավորում դասընթացում հաջորդ ուսումնական տարվանից
Ի՞նչ փոփոխություններ դուք կառաջարկեիք կատարել դասընթացի կազմակերպման գործընթացում

Դասախոս (ԱԱՅ)

Ստորագրություն

“ _____ ” _____ 20 թ.